ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ

I

Իմ եղբայրները օտարութեան մէջ
Ինձ ասում էին, — կարօտ ենք, երգիչ,
Մեր հայրենիքի երգերից սաւն.
Քո երգից նորա
Մայրական զուարթ
Հողի ու ջրի
Եւ մեր հարազատ
Հայ ժողովրդի
Հաճն ու հոտն առնենք,
Որ մխիթարուենք։

Սիրտս լցուեցաւ, և հառաչեցի...
Նրանք էլ ինձ հետ սասպիկ ցաւալի
Աղաղակելով արտասուում էին.
Եւ հոսում էին
Արտասուքները
Տխուր աչքերից,
Եւ մեր ձայները
Մի ծանօթ կսկիծ
Ուժեղացնում էր
Եւ միացնում էր։

Եւ, տխրութեան մէջ կամ թէ խնջոյքի,
Օտար աշխարհում,
Մենք այսպէս էինք մեր հայրենիքի
Երգերը երգում։

ՄՈՒՐՃ

II

Լսում ես դու էլ, թէ ինչ են խօսում
Մեր մասին ամբողջ ամաբանոցում.
Աչքերի տակից, տեսնում ես, ինչպէս
Մածուկ նայելով հետևում են մեզ,
Մեր ամեն խօսքին ականջ են դնում
Եւ կասկածաւոր աչքով են անում...
Մեզանից յետոյ էլ մէկը միւսին
Կ'ասեն—յիշում էք դուք այն երկուսին,
Ազգական չէին, ոչ քոյր ու եղբայր,
Ման էին գալիս անընկեր, անմայր...
Եւ գիշերները այս ծառերի տակ
Երգ էին ասում ձայնով ներդաշնակ,
Եւ նրանց երգը զգացմունքով լի,
Որ կախարդանք էր գիշերին տալի,
Որ ծաւալում էր այնքան հեշտալուր,
Լցուած սրտերի զեղմունք էր մաքուր.
Նկատում էիք, անտառի մթին
Սուերում երգը ընդհատում էին.
Այն լռութիւնը հասկանում էիք...
Մտաբերում էք դէմքը գեղեցիկ
Վայելչահասակ այն աղջկանը.
Երբ երիտասարդ օտարականը
Ագահ աչքերը վրան յառում էր
Խակոյն շիկնելով նա խոնարհում էր
Սիրուն գլուխը և ձեռքին բռնած
Մաղկափնջին էր նայում շփոթուած...
Ուրախ հնչիւնը նորա ծիծաղի,
Որ տարածում էր այնքան դիւրալի
Այս ամայացած, խուլ շրջակայքում,
Եւ սուր ճիչերով սրտերը ծակում...

Յիշում էք արդեօք
Այն ախտաբորբոք,
Միշտ զարթ զոյգին.
Սիրահար էին...